բերքերը՝ մեծ և արդիւնաւէտ օգուտ ՚են ցոյց տալիս վատառողջ միաբանութիւններին. Այս միաբանութիւնների ձեռքով մեծամեծ արդիւնքներ են հասել երկրագործութեան բաժնին. Այսպէս դիտելով, ինքն իրան օգնելու ձեւը երեւում է, ՚ի հարկէ, ինչպէս մի յառաջադիմութիւն, բայց դըժբաղդաբար սրա գործն էլ չէ աշխատող դասակարգի ամբողջութիւնը մի անտեսապէս ապահովեալ աստիճանի վրայ բարձրացնել, որովհետև դեռ աշխատող դասակարգը կարօտում է մի ամբողջ դառնալու՝ տէրութեան օգնութիւնով. Տէրութիւնը պէտք է մէջ մտնէ, երբ բանը այնտեղն է հասնում և գումարի կամ փողի ուժով եղած գործառութեան օգուտը ոչընչացնէ և ինքն իրան օգնելու ամենահարկաւոր պայմանները նորոգէ. Տէրութեան օգնութիւն հասցնելը գործառութեան ընդհանուր մարդկանց իբրեւ՝ միայն ողորմութիւն, ոչ այլ ինչ է, բայց թէ աշխատողներին թուլութեան և անբարոյականութեան մէջ ձգել. Մեր նայուածքով ուրեմն, օրէնսդրութիւնը հետեւեալ խնդիրները ունի կատարելու. Ա. Առողջապահութեան գիւտնի իշխանութիւնը տարածանել գործատուններին վրայ և արհեստագործութեան այն ճիւղն, որ յայտնի է իր առողջութեան վնասակար կամ երկիւղալի լինելովը. Բ. Գատանիների և իգական գործաւորների աշխատութեանը ժամանակ սահմանել, նմանապէս և արգելել ընդհանրաբար մի որոշեալ ժամանակից դուրս գործառութիւնը. Գ. արգելել մշակներին բնական բերքերով վարձատրելը, և բայց յայտնենք ամենից առաջ մշակների բարձր կրթութեան համար տէրութիւնը պէտք հոգայ ձրիապէս, կամ որչափ կարելի է, էժանագին ուսման մասին.



# Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ

Մինչ տիեզերք կանգնին քարոզ փառաց Տեառն,
Մինչ և միջասն չըքնաղ պատմէ ըղձեր երգափառն,
Զխորհուրդ տայս ես չնորհապարտ կամ անբան
Տեսեալ ըզխաչն անճառ սիրոյդ ըմպչան.
Ահ իմ եղուկ լեզուիս համեր անբարբառ,
Որ ոչ ՚ի ձայն գիտէ երգել զգերափառ
Արդարութիւն որպս խաչին փրկչական
Յոր բարձրացաւ Աստուածորդին սէր մարդկան.

Ո՜նչէս յիս սէրք սիրոյն անճառ գերալից
Սրբեա զմշուշ մտաց որ յիս թանձրանայ ,
Երգել արժան ըզ զօրութեանցդ անպայման ,
Ով քառատաւաք դու Գետ շնորհաց որբութեան .
Պերճ արեգին ծըր ճառագայթ կարմիրփիեան
Այրարատայ բարձու լերին գագաթան ,
Եկ տեսանել Գողգոթային ի գագաթ ,
Ով Յենարան իմ փրկչիս խաչափայտ .
Նախնաց դրախտին անկեալ յԷդին ծառ կենաց ,
Սուր բոցեղէն շրջապատեալ անգին գանձ ,
Կրթիմ յարուշ տեսեալ զփառսդ անպատում ,
Ով դու Աթոռ մարդասիրին գերագոյն :
Ինչ անէ փայտեդ կենաց զօրութիւն
Նախնիք տեսեալ դուշակ.ք անվրէպ լուր ետուն ,
Չեւ քո յայտնեալ յաշխարհ համայն ծանուցին
Ով դու Պաշտպան զքեզ 'ի յուս բարձողին :
Վա՛ն յԵգիպտոս անդրանկածոխ պօշէ մահ ,
Եւ պատառէ ըղծովն ահեղ քոյին ահ
Ի ջրասոյզ զփառս ընտիր և զօրս ,
Ով մեղաստան դու Գաւազան վարչահաս .
Պատիժ կրէր հինն Իսրայէլ օձահար ,
Քոյդ կանգնեցաւ նշան յաղթող մեծափառ ,
Ի սուժից վերայ ճարակ ախտից և հնար ,
Ով դու ընդդէմ մահուն Վահան փրկարար .
Հարմամբ քոյին վառի հոսեալ բարեհամ ,
Վէմն ապառաժ անշնորհ արանց ատարաժամ
Ձուղ ընձիւղէր Ահարոնեան գաւազան
Ով դու ելից յերկինս Սանդուխ Յակոբեան .
Մին դուշակաց բարձեալ ոլորդ քեւ բերէր ,
Եսայիաս հեռուստ ընկոյզ նշմարէր
Որ ապագայ խորհուրդն էր մեծ 'ի սէր մեր ,
Ով դու Հնձան փրկչին արեան կենսաբեր .
Գտակէր անմահ սոսնդին 'ի քեզ քանի՞ն
Քեւ իւր գահին բոց ընկալաւ Գեդէոն ,
Քեւ Սաբեկայ խոյն կախեցաւ Աբրահմին ,
Ով դու լուսոյն ողջակիզաց սեղանին .
Քեւ արդ ուրախ եղեն երկինք և երկիր ,
Ազգ և ազինք և ընդհանուր խաչակիր .
Կան անձկայրեաց մտան յուսով անպատիր
Քեզ մի՛ խորհին և սուն յուսոյ լուսալիր :
Լուծն իմ քաղցրիկ բեռն իմ փոքրիկ բարձողաց
Մխահեծանն Յիսուս փրկիչ զքեզ կոչեաց ,
Զի քոյ վերայ կայր սեւեռեալ բանն Աստուած

Ո՛հ երանի՜ անձինս ընդ քեզ սիրողաց.
Ին հարք ուստերք են մարք դստերք սիրելի,
Այլ տուեալ տէր է իմ լոյս պաշտելի;
Այն որ 'ի քեզ եկեալ մարմնով խաչեցաւ,
Ո՛հ փրկութեան դու միայն ես մեզ Դուռ.
Գունդ զօրապետդ նահատակաց ընթանան
Պսակ 'ի գլուխ, և ընդ Գառին տառապածեան
Ընդ ընտրելոցն ըղձիւ լինուն միանան,
Ո՛հ մանկանց զհօտն 'ի փարախ կենաւորան.
Ընդ որս և ես, ո՛վ քաղաքեան փայտ կենաց,
Եր հաճանի, հարդեամ զուգին երկնքինթաց,
Սատանայ հողմոց փոթորկաց փորձանաց,
Զի նաւեկից ընդ ծով սատկաց անկարակոծ:
Արա իմ 'ի հուր սիրոյդ վառել անձկոյ յար,
Հոգիս անձինս կրկնել ընդ քո վսեմ ձայն;
Աստուածային անբաւ սիրոյն նշանակ
Ո՛հ հաղթութեան նորին դու ես Յաղթանակ:

Յ. Ս. Կէօմիւրճեան.

---

Հարցասիրութիւն և հանդէս Երկսեռ վարժարանաց քաղաքիս:

Այսօր մետասաներորդ օրը քաղաքիս երկսեռ վարժարանաց տարեկան հարցաքննութիւնն սկսաւ. երեք օր աշակերտաց անուեց. որք կ՚ուսանին սրբազան պատմութիւն. տրամաբանութիւն. Ճարտասանութիւն. տոմարագիտութիւն. հայերէն և ռամկերէն լեզուաւ. տաճկերէն և գաղղիերէն, և երկու օր աշակերտուհեաց. որոց ուսմունքն են սրբազան պատմութիւն. ազգային պատմութիւն, քերականութիւն:

Այս ուսմանց մէջ թէ աշակերտք և թէ աշակերտուհիք անաչառապէս քննուեցան թէպէտ. սակայն այսու ամենայնիւ գոհ ըլլալ պատուելի քննիչքը. որով և պսակեցին Արժանապատիւ տէրտէր Աննայեան վարդապետի և միւս քննողաց ուրախ ցնծայ աշխատութիւնքը:

17. ժամը 6ին աշակերտաց պարգեւաբաշխութեան հանդէսը սկսաւ գողտրիկ երգով մի ուրբ Աթուայս ձեմարանին մէջ. որ նոյնպէս զարդարուած էր ինչպէս ժառանգաւորաց հանդէսի օրը. կարդացուեցան չորս ճառ, մի քաղաքականութեան և մի գիտութեան վերայ. որոց երկու հայերէն. երրորդը տաճկերէն և չորրորդը արաբերէն ատենաւոր մի. յետոյ չորս աշակերտք արտօրուած մի ներկայացուցին տրական սեռին մերաբերեալ, և հանդէսը վերջացաւ:

Հետևեալ օրը նոյնպէս չորրորդ ժամուն աշակերտուհեաց հանդէսն սկսաւ առ մայրն Հայաստան ուղղած ողբաշարժ երգով մի, ու աշակերտուհիք ընթերցան զանազան ճառեր, և ներկայացուցին գեղեցիկ արամախօսութիւն մի հայկազանց սրբազան պատմութեանց վրայ. այս օգտակար և միանգամայն հաճոյական բանախօսութեանը յաջորդեց վկայականաթինը. ամէնքը՝ ալ գէն յայտնի է